ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-20-3/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26.11.2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
անդամներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ոատյան,
ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչության ՄշԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Օհանյան,
ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչության ՄշԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավագյան
Գնումների համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Հակոբյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով Գնանշման հարցման էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով Գնանշման հարցման 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ
2	«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով Գնանշման հարցման էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Գ. Հակոբյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Հակոբյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 2 մասնակից.

Չ/Հ	Ապրանքի նվանում	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային ընդհանուր գին	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի առաջարկ		«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի առաջարկ		1-ին տեղ զբաղեցրած մասնակից
					Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	
1	Տեղեկատվական վահանակներ (ՀՀ ազգային հերոսների տպագրված պաստառներ մետաղյա հենքով և ամրակներով)	հատ	20	1 000 000	1 000 000	1 200 000	900 000	900 000	Բանակցություն
	Տեղեկատվական վահանակներ (Արցախի ազգային հերոսների տպագրված պաստառներ՝ մետաղյա հենքով և ամրակներով)	հատ	24	1 200 000	1 000 000	1 200 000	1 080 000	1 080 000	Բանակցություն

Ըստ ներկայացված տեղեկությունների «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ –ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ սույն ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշմամբ սահմանված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ 26.11.2019թ. որոշեց նիստը կասեցնել և հայտ ներկայացրած մասնակիցների հետ 29.11.2019թ. ժամը 14:30 կազմակերպել միաժամանակյա բանակցություններ: Սահմանված օրը և ժամին բանակցությունների համար ներկայացան «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն: Քանի որ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն, չի ներկայացել բանակցությունների, ուստի վերջինիս գինը մնաց առանց փոփոխության:

Բանակցությունների արդյունքում 1-ին չափաբաժնի մասով «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն նախկինում ներկայացրած գինը թողեց առանց փոփոխության, իսկ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկեց 984 000 ՀՀ դրամ:

Չ/Հ	Ապրանքի նվանում	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային ընդհանուր գին	« Իմպորտ Թրեյդ » ՍՊԸ-ի առաջարկ		«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի առաջարկ		1-ին տեղ զբաղեցրած մասնակից
					Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	
1	Տեղեկատվական վահանակներ (ՀՀ ազգային հերոսների տպագրված պաստառներ մետաղյա հենքով և ամրակներով)	հատ	20	1 000 000	1 000 000	1 200 000	900 000	900 000	«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
2	Տեղեկատվական վահանակներ (Արցախի ազգային հերոսների տպագրված պաստառներ՝ մետաղյա հենքով և ամրակներով)	հատ	24	1 200 000	1 000 000	1 200 000	984 000	984 000	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Հակոբյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 03.12.2019թ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով Գնանշման հարցման հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ -ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով Գնանշման հարցման հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ. Հակոբյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/3» ծածկագրով Գնանշման հարցման նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող, Գ. Ուստյան

Գնահատող, Ա. Օհանյան

Գնահատող, Կ. Ավագյան

Գնումների համակարգող՝ Գ. Հակոբյան